

Մարքեթինգի և հաղորդակցության մասնագետ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝ տեխնոլոգիաների փոխանցման գործուն մեխանիզմների ձևավորումն ու ներդրումը, բիզնեսին (այդ թվում՝ փոքր և միջին) աջակցության և խորհրդատվության տրամադրումը, ինչպես նաև գիտատեխնիկական տեղեկատվական և գրադարանային ծառայությունների մատուցումը:

Պահանջվող որակավորումները

- Բարձրագույն կրթություն մարքեթինգի, հաղորդակցության կամ դրա հարակից ոլորտում,
- Գերազանց բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- Վեբ վերլուծության գործիքների, SEO գործիքների իմացություն և G-suite ծրագրերի տիրապետում,
- Կազմակերպչական գերազանց հմտություններ, առաջնահերթություններ սահմանելու հարցում և վերջնաժամկետներում աշխատելու ունակություն,
- Թվային մարքեթինգի արշավների կազմակերպման և կառավարման փորձ:

Պարտականություններ

- Մշակել Մարքեթինգային հայեցակարգեր և իրականացնել արդյունավետ հաղորդակցման ռազմավարություններ,
- Պլանավորել և կառավարել մարքեթինգային արշավներ ինտերնետում, SEO, էլեկտրոնային փոստով և սոցիալական ցանցերում,
- Կազմակերպել կոնֆերանսներ / միջոցառումներ և ստեղծել առցանց և անցանց հաղորդակցման հաբեր,
- Համակարգել թվային կոնտենտի ստեղծումը կայքի, և տեղադրվող վիդեոնների համար,
- Շփվել ոլորտի փորձագետների և այլ ներկայացուցիչների հետ բարձրացնելու Կազմակերպության իրազեկությունը,
- Կատարել պաշտոնի անձնագրից բխող այլ պարտականություններ:

Լրացուցիչ տեղեկություններ

- Տևողությունը՝ Ամբողջական դրույք, (9:00-18:00)
- Հասցե՝ Կոմիտաս 49/3

Հետաքրքրված թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները հետևյալ հասցեով՝ info@ncie.am, subject դաշտում նշելով «մարքեթինգի և հաղորդակցության մասնագետ»: Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2022 թվականի **սեպտեմբերի 8-ը** և միայն կարճ ցուցակում ընդգրկված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: